

Հաշվետվություն

2023 թվականի հունիսի 19-ից 25-ը Շվեդիայի Թագավորություն
(Ստոկհոլմ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

Արևիկ Ավոյան
Մարինե Սահակյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ
Կադաստրի կոմիտեի ղեկավարի օգնական

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Շվեդիայի Թագավորություն, Ստոկհոլմ, հունիսի 19-ից 25-ը

4. Հրավիրող կողմը.

Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքի Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Նորարարություն և ձեռներեցություն» աշխատաժողովին

6. Քննարկված թեմաները.

- կրթություն, հետազոտություն և նորարարություն,
- նորարարությանը և ձեռներեցությանը նվիրված դասախոսություն (արժեքի առաջարկ և բիզնես մոդելներ, հաճախորդների և շուկայի վերլուծություն, նոր բիզնես ձեռնարկությունների կազմակերպում, ֆինանսական ռազմավարություններ),
- ճանաչողական այց Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքի Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտի նորարարական կենտրոն,
- նորարարությունը երկրատեղեկատվական տեխնոլոգիայում (մրցակցային և նորարարական տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ-կենտրոնացված էկոհամակարգերի կառուցման հիմունքներ, «Հորիզոն Եվրոպա R+D+I» ծրագրի ներկայացում, համալսարան-արդյունաբերություն համագործակցությունը գեոդեզիայում. Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքի Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտի փորձը արդյունաբերական ասպիրանտուրայի ոլորտում, համալսարան-արդյունաբերություն համագործակցություն երկրատեղեկատվական ոլորտում, ծրագրեր և

պրակտիկա, Հայաստանում և Ղրղզստանում համալսարան-արդյունաբերություն համագործակցության ուղղությամբ պանելային քննարկումներ, տրանսպորտի էլեկտրաֆիկացման համար որոշումների կայացման տարածական համակարգեր, «Գեոթակ» (GeoTAK) ծրագրի կառավարման անդամների հանդիպում,

- երկրատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ներկայացում ձեռներեցության ծրագրի աշխատանքում (բիզնես գաղափար/մոդել, նորույթ և նորարարություն, հաճախորդներ և շուկաներ, թիմ, ֆինանսական հարցեր),
- ծրագրի քննարկում աշխատանքային խմբերով (Վասա նավի (շվեդական ռազմանավ, որը գործարկվել է 1628 թվականի ամռանը) դեֆորմացիաների հետազոտություն և պատկերացում),
- ծրագրի քննարկում աշխատանքային խմբերով (յուրաքանչյուր խմբի կողմից ծրագրի աշխատանքների արդյունքների ներկայացում):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել երկրատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերի զարգացմանը, ինչպես նաև Հայաստանի և Ղրղզստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև հետազոտական և նորարարական կապերի ամրապնդմանը: Աշխատաժողովի շրջանակում կայացել է կառավարման խորհրդի նիստ, որի ընթացքում ներկայացվել են ֆինանսական հաշվետվություններ: Բուհերը ներկայացրել են ասպիրանտուրայի ծրագրի ընթացքը, մրցույթների արդյունքները, քննարկվել են ասպիրանտական ծրագրի մանրամասները, ինչպես նաև համագործակցության հեռանկարները՝ հաշվի առնելով ծրագրի ավարտական փուլը:

Կարևորվել է Կադաստրի կոմիտեի մասնագիտական դերը ծրագրի հետագա ընթացքի համար՝ որպես խորհրդատվական մարմին:

Քննարկվել է պետական մարմինների, բուհերի և ինստիտուցիոնալ կառույցների մասնակցությամբ ստեղծել ազգային հետազոտական կենտրոն, որի հիմնական նպատակը լինելու է գիտակրթական ծրագրի մշակումը: Միաժամանակ քննարկվել է հանձնաժողովի կառուցվածքային և ֆինանսավորման հարցը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում հանդիպելու Վալենտինայի պոլիտեխնիկական համալսարանի «Գեոթակ» ծրագրի համակարգող Լուիս Անգել Ռուիզի հետ և քննարկելու ծրագրի հետագա ընթացքը: Նշված հանդիպումը կայացել է 2023 թվականի հունիսի 28-ին Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի մոտ, որին մասնակցել են «Գեոթակ» ծրագրում ներգրավված

Կադաստրի կոմիտեի ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքում քննարկվել են ոլորտի նորարարությունները, Հայաստանում նորագույն տեխնոլոգիաների կիրառելիության, ինչպես նաև մասնագիտական բուհերի հետ համագործակցության հնարավորությունները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է ծրագրի գործողության ժամկետը երկարաձգել 9 ամսով, ինչպես նաև պետական մարմինների, բուհերի և ինստիտուցիոնալ կառույցների մասնակցությամբ ստեղծել ազգային հետազոտական կենտրոն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արևիկ Ավոյան
Մարինե Սահակյան



06.07.2023 թ.